

արդէն մտքի եւ սրտի ընտիր պաշարով օժտուած էին եւ վարդապետական կոչման յաջող կերպով պատրաստուած:

Մ Յ Ո Ւ Ւ Ս . Կ Ա Ր Ա Պ Ե Տ

“Ուժգին” արցունքով թիկունք դարձուցին (1705ին) Ամրտոյին Կոլրտ եւ Շղթայակիր, հոգեկից եւ հոգեկցորդ վարդապետները եւ ուրիշ վանքերու եւ մենաստաններու այցելելէ ետքը՝ իրենց շունչն առին Մշու Ս. Կարապետ՝ “սրբոյն Գլակայ լուսաշէն” վանքը: Այս ուխտագնացութեան միջոցին սր որ հանդիպեցան Կոլրտ եւ Գրիգոր՝ ջերմ ընդունելութիւն դտան: Ամէն տեղ լինելու առաջարկներ ու հրաւերներ եղան երիտասարդ վարդապետներուն թէ “կացէք աստ”, այս տեղ կեցէք:

Տարօնոյ ժողովուրդը, մանաւանդ Ս. Կարապետի առաջնորդը՝ Կարապետ Եպիսկոպոս, անկեղծ սիրով ու համակրանքով ասպնջական եզան մեր ջուխտակ Ամրտոյցիներուն, որոնց կենցաղագիտութիւնը միայն բաւական էր արտայայտելու ապագայ մեծ եկեղեցականներուն արժէքը: Երախտագիտական խորունկ զգացումներով եւ գոհունակութեան թափանցիկ շեշտով մը՝ կը յիշատակէ Կոլրտ այն ընդունելութիւնը, զոր ըրին Յործնէ գիւղացիք եւ տարին զիրենք մինչեւ Ս. Կարապետ:

Իբր միաբան՝ ոգիով աշխատեցան Ս. Կարապետի բարեկարգութեան եւ վիճակայիններու հոգեւոր կրթութեան. թէեւ վանքը շատ նեղ հանգամանքներու մէջ էր, բայց օրէ օր ներսէն եւ դրսէն կը վայելանար, կը պայծառանար: Որովհետեւ Ս. Կարապետը միայն ոչոք ժողովելու համար նուիրակ չէր հաններ իր ծոցէն՝ այլ վաղեմի սովորութեան մը համաձայն, միաբանութեան ամէնէն կարող վարդապետները քարոզութեան համար վիճակները կը զրկուէին բովանդակ ձմռան